Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 35-Ն ԵՎ 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 35-Ն որոշման վերնագրում չի գրառվել իրականացված գույքագրման տարեթիվը, իսկ բովանդակության մեջ՝ օրն ու ամիսը: Բացի այդ, որոշումը նորմատիվ բնույթի դրույթ չի պարունակում, ուստի «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման բովանդակության մեջ «համաձայն» բառից հետո և որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում նշված «1» թիվը հանել:

Որոշումներում տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Որոշումները մարզպետարան առաքվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
10.02.2020թ.